Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Պ-801[1]-10.12.2020-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2020 թվականի սեպտեմբերի 18-ի ՀՕ-440-Ն օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԵՎ «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երկրորդ ընթերցում

Պ-801[1]-10.12.2020-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2020 թվականի սեպտեմբերի 18-ի ՀՕ-440-Ն օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Պ-801-10.12.2020-ՊԻ-011/1 ԵՎ «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Հեղինակ	«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ,	Նախագծով առաջարկվում է Օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասում Խորհրդի ձևավորված լինելը պայմանավորել ոչ միայն սահմանված ժամկետում դրա կազմի բոլոր անդամների նշանակման հանգամանքով, այլ նաև Ազգային ժողովի նախագահի	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:

		հոդված 1	կողմից Խորհրդի անհատական կազմը հաստատելու փաստով: Միաժամանակ, Օրենքի 9-րդ հոդվածի նույն մասի հաջորդ նախադասությունը սահմանում է, որ սահմանված ժամկետում որևէ իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) կողմից Խորհրդի անդամ չնշանակվելու դեպքում Խորհուրդը համարվում է ձևավորված նշանակված անդամների կազմով, եթե սույն մասով սահմանված կարգով նշանակվել է Խորհրդի առնվազն երեք անդամ: Առաջարկվում է սույն դրույթում ևս կատարել համապատասխան փոփոխություն՝ սահմանելով, որ (...) Խորհրդի անդամ չնշանակվելու դեպքում Խորհուրդը համարվում է ձևավորված նշանակված անդամների կազմով Ազգային ժողովի նախագահի կողմից Խորհրդի անհատական կազմը հաստատելու օրվանից, եթե սույն մասով սահմանված կարգով նշանակվել է Խորհրդի առնվազն երեք անդամ:		

			Միաժամանակ, առաջարկվում է հստակեցնել Ազգային ժողովի նախագահի կողմից Խորհրդի անհատական կազմը հաստատելու ժամկետները:		
2.	Հեղինակ	«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 3	Առաջարկվում է հստակեցնել հավակնորդի հայտի ընդունումը մերժելու մասին որոշման կայացման ժամկետը, դրա մասին ծանուցման ժամկետները ու եղանակը՝ միաժամանակ սահմանելով բողոքարկման իրավունքի իրացման կառուցակարգեր:	ԸՆԴՈՒՆՎԵԼ է	ԸՆԴՈՒՆՎԵԼ է:
3.	Հեղինակ	«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 4	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ Խորհուրդը Հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածու ընտրելու վերաբերյալ իր որոշումը, իսկ սույն օրենքի 10.2-րդ հոդվածի 24-րդ մասով նախատեսված դեպքում՝ թեկնածուների ցուցակը, ինչպես նաև սույն օրենքի 10-րդ հոդվածի պահանջների ապահովումը հավաստող փաստաթղթերը երեք աշխատանքային օրվա ընթացքում	ԸՆԴՈՒՆՎԵԼ է:	

			աշխատակազմի միջոցով ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին: Թեև տվյալ դրույթը գրեթե ամբողջությամբ վերարտադրում է Օրենքի 10.2-րդ հոդվածի 25-րդ մասի կարգավորումները, այդուհանդերձ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածու ընտրելու վերաբերյալ Հանձնաժողովը կայացնում է որոշում՝ օրենքի 10.2-րդ հոդվածի 24-րդ մասով նախատեսված դեպքում ևս Հանձնաժողովը պետք է կայացնի համապատասխան որոշում: Վերոգրյալի համատեքստում՝ առաջարկվում է «իսկ սույն օրենքի 10.2-րդ հոդվածի 24-րդ մասով նախատեսված դեպքում՝» բառերից հետո լրացնել «Հանձնաժողովի անդամների պաշտոնում թեկնածուներ ընտրելու վերաբերյալ իր որոշումը և» բառերը: Ըստ այդմ, առաջարկվում է նաև 2-րդ մասում «Ցուցակին» բառը փոխարինել «Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերին» բառերով:		

4.	Հեղինակ	«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 5, մաս 3	Նկատի ունենալով այն հանգամանքը, որ մրցութային խորհրդի անհատական կազմը հաստատելու նպատակով ընդունվելու է անհատական իրավական ակտ՝ Նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասում առաջարկվում է նախատեսել կարգավորում՝ առ այն, որ մրցույթն Ազգային ժողովի աշխատակազմի միջոցով Ազգային ժողովի նախագահի կողմից հայտարարվում է ոչ միայն Ազգային ժողովի նախագահի կողմից մրցութային խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին իրավական ակտը հրապարակելու, այլ նաև մրցութային խորհրդի անդամներին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից	ԸՆԴՈՒՆՎԵԼ է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ է: